



Մամլո հաղորդագրություն

Հարավային Կովկասն առանց ականների

#landminefreeSC

Այս տարի առաջին անգամ ապրիլի 4-ը՝ ականների վտանգի իրազեկման միջազգային օրը, Հարավային Կովկասում կնշվի տարածաշրջանային լայնամասշտաբ ականային վտանգի իրազեկման քարոզարշավի տեսքով՝ հանդես գալով «Հարավային Կովկասն առանց ականների» կարգախոսի ներքո: Ապրիլի 4-10 անցկացվող քարոզարշավը կուղեկցվի տարածաշրջանի մի շարք քաղաքներում և շրջաններում անցկացվող միջոցառումներով և տեղեկատվությունը կտրամադրի հայերեն, ադրբեջաներեն, վրացերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով:

Չափավոր գնահատումների համաձայն՝ վերջին 30 տարվա ընթացքում Հարավային Կովկասում ոչ մարտական իրավիճակների ժամանակ ականների և չպայթած զինամթերքի պատճառով զոհվել կամ վնասվել է ավելի քան 5000 մարդ: Խնդրի լուծումը դեռևս առկա է՝ չնայած նրան, որ մի շարք հաջող փորձեր են արվել՝ ականազերծելու մեծամասշտաբ տարածքներ, որոնք առավելապես մոտ են բնակելի շրջաններին:

Ականները անվիճելիորեն սպանում և խեղում են՝ բազմաթիվ տուժածներ անմեղ քաղաքացիներ են, ներառյալ՝ երեխաներ: Ժնևում հիմնադրված «Ականների և քլասթերային զինամթերքի վերահսկման» կազմակերպությունը իր 2018թ. զեկույցում հայտարարեց, որ ականներից և չպայթած զինամթերքից տուժածների 87%-ը զինվորական չեն, այլ քաղաքացիականներ են, որոնց 47%-ը կազմում են երեխաները: Հարավային Կովկասում հավաքագրված տուժածների տվյալները ցույց են տալիս, որ նրանց մեծամասնությունը նույնպես քաղաքացիական են: Այս խնդիրը մեծապես ազդում է ոչ միայն ականից տուժած անձանց, այլ նաև նրանց ընտանիքների, ընկերների և համայնքների վրա:

Հարավային Կովկասում ականները ոչ միայն մարդկային վնասներ են պատճառում, այլ նաև, շատ դեպքերում, խոչընդոտում են տնտեսական զարգացմանը: Ի թիվս այլ վնասների՝ նրանք սահմանափակում են գյուղատնտեսական հողերի մշակումը, ինչպես նաև անասնաբուծությունը՝ խաթարելով տնտեսությունը:

2019թ. ապրիլի 4-10 անցկացվող «Հարավային Կովկասն առանց ականների» քարոզարշավը տարածաշրջանի կառավարություններին, կարծիք ձևավորողներին և քաղաքացիներին կքաջալերի ավելի մեծ ջանքեր ներդնել՝ Հարավային Կովկասը մաքրելու ականների և չպայթած զինամթերքի պատուհասից: Քարոզարշավը ականների ռիսկերի մասին հաղորդագրությունը կտարածի երեխաներին, երիտասարդներին և այլ խոցելի խմբերին՝ առավելապես նրանց, ովքեր ապրում են դեռևս վարակված տարածքներում: Մյուս կողմից՝ քարոզարշավը նաև կնշի իրենց գործին նվիրված հարյուրավոր մասնագետների կողմից տարածաշրջանում կատարված և ընթացիկ կատարվող աշխատանքը, որոնք ամեն օր իրենց կյանքը վտանգի են ենթարկում՝ մաքրելու ականները և չպայթած զինամթերքը, որպեսզի հարավային Կովկասը դառնա անվտանգ ներկայիս և ապագա սերունդների համար:

Մի շարք ազգային և միջազգային կազմակերպություններ մասնակցում են «Հարավային Կովկասն առանց ականների» քարոզարշավին, որի նախաձեռնությունը հովանավորում է Եվրոպական միությունը:

«Հարավային Կովկասն առանց ականների» քարոզարշավի մասին տեղեկատվությունը սոցիալական հարթակում հասանելի է [#landminefreeSC](#) հեշթեգով: Հավելյալ տեղեկատվության համար կարող եք կապվել ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍՆ ԱՌԱՆՑ ԱԿԱՆՆԵՐԻ քարոզարշավի համակարգող իրավասուի հետ՝ office@links-dar.org կայքում: